

ՍՈՒՐԲԳՐԱՅԻՆ ՎԿԱՅԱԿՈՉՈՒՄՆԵՐԸ ՎԱՂ ՇՐՋԱՆԻ
ՆԱՅԿԱԿԱՆ ՈՐՈՇ ԵՐԿԵՐՈՒՄ ԵՒ ՆՈՒՆԱԲԱՆ
ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Նայագիտության չլուծված, սակայն հրամայական դարձած խիստ կարևոր խնդիրներից է հայերեն Աստվածաշնչի բնական բնագրի պարզաստմը: Սա սրբազան նպատակ է, որ մինչև այժմ չի իրականացվել, թեև այդ հարցին անդրադարձել են բազում նվիրյալ անձինք¹: Ինչ խոսք, հայերեն Սուրբ Գրքի բնական ու գիտական բնագրի պարզաստման հարցը չափազանց բարդ խնդիր է: Այն ենթադրում է համահավաք, միասնական ներկայացնել հայերեն Աստվածաշնչի վերաբերյալ եղած բոլոր տվյալները ոչ միայն մեզանում առկա տարբեր թարգմանությունների («փոխանակի» և Եփեսոսի ժողովից հետո արված) և դրանք ընթացքում կատարված խմբագրությունների ու մեկնությունների, այլև հայ մատենագրության (ինչպես ինքնուրույն, նույնպես և թարգմանական) մեջ սփռված սուրբգրային հատվածների, Աստվածաշունչ կամ Ավետարան պարունակող հայկական ձեռագրերի լուսանկարներում նշված սրբագրությունների նորագույն բանասիրական սկզբունքներին համաձայն մի բնություն: Պարզ է նաև, որ այս գործը հարկ է հանձնարարել գիտնականների մի խմբի, որոնք բացի հայերենից փրապետում են նաև եբրայերեն, հունարեն, ասորերեն, լատիներեն ու երոսական լեզուների: Նման բնագրագիտական աշխատանք կատարելու համար այս գիտնականները քաջադեպակ պետք է լինեն նաև ոչ միայն կրոնաստվածաբանական գրականությանը, այլև պարմությանը, բանասիրությանը, լեզվագիտությանը, հնագրությանը, հնագիտությանը, կրոնների պարմությանը, փիլիսոփայությանը, գրականությանը, ազգագրությանը, աշխարհագրական և տեղագրական տվյալներին: Միայն համեմատելով այս բոլոր տվյալները, կարելի է հասնել այն բաղձալի արդյունքին՝ այսինքն, հայերեն Աստվածաշնչի մի տեքստի, որը հնարավորին չափ ամենամոտր կլինի Սահակ-Մեսրոպյան Աստվածաշնչի բնագրին կամ այն տեքստին, որը գոյություն է ունեցել հնում, սակայն մեզ չի հասել կամ կցկտոր պատահիկներ են հասել:

Այս առումով հայ հեղինակների երկերում և թարգմանություններում առկա

1 Դեռևս մոտ հարյուր տարի առաջ Նիքոլայ Նալեկի Կաթողիկոսը հանձնարարել էր Կարապետ վրդ. Տեր-Մկրտչյանին Մատենադարանի ընտրվածույն ձեռագրերի հիման վրա պարզաստել հայկական Աստվածաշնչի բնական բնագիրը: Շահե արքեպիսկոպոս Աճեմյանը, անցած դարի 90-ական թթ. սկսած, ջանք չխնայեց այս գործը խթանելու համար: Այսօր ես կան մի շարք ձեռնարկումներ հայկական Աստվածաշնչի բնական բնագրի ստեղծման գործում: Օրինակ՝ Ա. Մալխասյանի «Աստվածաշունչն ըստ հայ մատենագրության» գիրքը, որում ամփոփված են Ե-ԺԲ դարերի հայ մատենագիրների երկերում մեջբերված աստվածաշնչային հղումները, ինչպես նաև Թ-Ժ դարերում ընդօրինակված Ճաշոց և Մաշտոց ժողովածուներում պարունակվող սուրբգրային ընթերցանները, կարևոր ներդրում է այս գործին իրականացնելու համար:

Աստվածաշնչի մեջբերումների ուսումնասիրությունը կարող է շատ նպաստավոր լինել: Դրանք հաճախ տալիս են շատ ավելի ընդլիար տարբերություններ, որոնք թվում է՝ արտացոլում են այսպես կոչված ընկալյալ բնագիրը (textus receptus):

Թեև շատ մասնագետներ անդրադարձել են Սուրբգրային վկայակոչումների խնդրին², սակայն հարցն, այնուամենայնիվ, սպառված չի կարելի համարել: Ասվածի մասին է վկայում, օրինակ, Նունաբան դպրոցի թարգմանիչների կողմից Աստվածաշնչից արված մեջբերումների առանձնահատկությունների խորը ուսումնասիրության չարժանատի փաստը: Մինչդեռ Նունաբան դպրոցի թարգմանություններում Աստվածաշնչից կատարված մեջբերումները բնութագրվում են որպես նկատելիորեն ազատ, կանոնականացված տեքստից տարբերվող հարվածներ: Ըստ որում, յուրաքանչյուր հունաբան թարգմանության համար այդ «ազատության» չափը նույնպես տարբեր է. դրանք, պարզապես կան վերապատումներ են կան անստույգ մեջբերումներ:

Գրեթե նույնը հնարավոր է ասել նաև վաղ շրջանի հայ պատմիչների երկերի որոշ սուրբգրային վկայակոչումների վերաբերյալ: Նարեկ է նաև նշել, որ այդ բնագրերը հրապարակելիս, մեզանում, հաճախ, անտեսված է Աստվածաշնչային վկայությունների ցանկերի պարբերական, ինչը հարակից, օժանդակ միջոց լինելով, նպաստում է խնդրի ուսումնասիրմանը: Ի դեպ, այդ օրինակ ցանկերի բացակայությունը լավագույնս փաստում է հարցի դուրս մնալը գիտական հետաքրքրության ոլորտից:

Նարեկանական է, որ հայ հեղինակները չեն կիրառել Նունաբան դպրոցի մեթոդն Աստվածաշնչային տեքստերը թարգմանելիս: Միևնույն ժամանակ հայ թարգմանիչները չեն խախտել նաև այն սկզբունքը, ըստ որի *Սուրբ գրքում* (նվիրական գրքերում) չէր կարելի փոխել անգամ բառերի կարգը:

Վաղ շրջանի հայ պատմիչների թողած տեղեկությունները եւս նպաստավոր են խնդրո առարկա հարցի վերաբերյալ եզրահանգումներ անելու համար: Այդ հեղինակները, ճիշտ է, չեն վերապատում Աստվածաշնչի այս կամ այն դրվագը, սակայն մեջբերումներ կատարելիս, նույնպես որոշ «ազատություն» են ցուցաբերում: Ըստ իս, դա ոչ թե կամայականություն է, այլ խմբագրման խնդիր: Ասվածը լուսարաններ օրինակներով: Ազատագեղոսի գրքում առկա Աստվածաշնչային բազում վկայությունները միշտ չէ, որ բառացիորեն համընկնում են կանոնիկ տեքստին՝ հաճախ տալով տարբերություններ: Օրինակ, Մարթեոսի Ավետարանի

2 Aug. Carrère, Une version arménienne de l'Histoire d'Asséneth, Nouveaux Melanges Orientaux, 1886, Ս. Վերել, Ս. Գրոց յարգն ու արժէքն ինն Նայոց քով, «Նանդէս Ամսօրեայ», 1897, էջ 130-132, Գ. Խալաթեանց, Ա եւ Բ Մնացորդաց գրքերի նորագիտ հայ թարգմանութիւնը, Վաղարշապատ, 1896, Գ. Խալաթեանց, Գիրք Մնացորդաց ըստ հնագոյն հայ թարգմանութեան, Մոսկվա 1899, Գ. Խալաթեանց, Մի նոր օրինակ նորագիտ Մնացորդաց գրոց, «Նանդէս Ամսօրեայ», 1901, էջ 193-195, Մ. Тер-Мовсесян, История перевода Библии, С-Петербург, 1902, сс. 191-192, Т. Macler, Le texte arménien de l'Évangile d'après Matthieu et Marc, Paris 1919, P. Aug. Merk, Die Einheitlichkeit der armenischen Evangelienübersetzung. Biblica 4 (1923), S. 356-374, Եղ. Դուրեան, Ուսումնասիրութիւնք եւ քննադատութիւնք, Երուսաղէմ, 1935, 465-475, 363-371, 317-326, Եղ. Դուրեան, Սրբագրութիւններ Մակարայեցոց Ա եւ Բ գրքերու թարգմանութեան, «Արեւելեան Մամուլ», թ. 2, 1908, 444-451, Պ. Էսապեան, Նայերէն Աւետարաններու սկզբնագրի հարցը եւ Ազատագեղոսի ու Ղազար Փարպեցու կոչումները, «Նանդէս Ամսօրեայ», 1935, էջ 571-596, 1936 22-40, 185-195, 338-349, Ն. Անաթեան, Տիմոթէոս Կուղ եւ Ս. Գրքի նորաբեր թարգմանութիւնը, «Բանասիրական ուսումնասիրություններ», Եր., 1976, 40-73, Ա. Զեյթունյան, Աստվածաշնչի ինն թարգմանության հետքերը Եղիշի երկերում, ՊԲՆ 1980 (2), 130-142, Ն. Գլոսեյան, Սուրբգրային վկայակոչումները Կորնուլի «Վարք Մաշտոցում», «Էջմիածին», 1993, թ. Դ-Ե-Զ, էջ 39-49:

«գո՞ որ ասեն զինէն մարդիկն՝ թէ իցէ որդի մարդոյ»³ արքայապետութիւն Ագաթանգեղոսի Պարմութեան մեջ ներկայացված է այսպէս. «Զո՞ ուսարեք ասեն մարդիկս զՈրդոյ մարդոյ թէ իցէ»⁴: Նկատելի է, որ արքայապետութիւնները քրեանելիորեն քարքերվում են. հայկական կանոնիկ քրեայրը համընկնում է երկու հունարեն եւ երեք ասորերեն ձեռագրերի հետ⁵: Ագաթանգեղոսի «Նայոց պարմութեան» մեջ Ասրվածաշնչի կանոնիկ քրեայրից քարքերվող նման օրինակները բավական շատ են⁶:

Մովսես Խորենացու երկի ասրվածաշնչային վկայութիւնները թերեւս փաստում են, որ մեջբերումներ կատարելիս, նա հաշվի է առել իր ժամանակներում առկա քարքերթերցումները: Նուրբարվոր է, որ նա էլ է ուղղումներ կատարել, հունարեն կամ ասորերեն ձեռագրերի հետ համեմատելով ձեռքին ունեցած քրեայրը. «Նարկ է գալ գայթակղութեանն, բայց վայձայնոցիկ, ընդ այր ձեռն գայցէ գայթակղութիւնն՝ թոյլ ետուն նմա»⁷:

Մարթեոսի Ավերարանում (ԺԸ. 7) նույն նախադասութիւնը հնչում է այսպէս.

«Նարկ է գալ գայթակղութեանց, բայց վայձայն մարդոյն այնմիկ՝ յոր ձեռն գայցէ գայթակղութիւնն»:

Ղուկասի Ավերարանում (ԺԷ. 1) այն փոքր-ինչ այլ է.

«Ոչ է մարթ չգալ գայթակղութեան. բայց վայձայնմիկ է՝ յոր ձեռն գայցէ»:

Խորենացու մեջբերած արքայապետութիւնը, որը Նոր Կտակարանի հունարեն քրեայրում էլ ունի քարքերթերցումներ⁸, ստույգ չի կրկնում ո՛չ Մարթեոսի, ո՛չ էլ Ղուկասի ընթերցումները: Ըստ որում, սա Խորենացու երկում առկա բազում նման օրինակներից ամենացայտունը չէ⁹: Ոչ ստույգ մեջբերումների խնդիրը բացառութեան կարիք ունի եւ ստորեւ բերվող նկատառումները, թերեւս, կարող են նպաստել դրան:

Այն մասին, որ Խորենացու օրոք Ասրվածաշնչի թարգմանութիւնը դեռեւս փոփոխութիւնների էր ենթարկվում, քեղեկանում ենք հենց Պարմաներից. «...եւ մարտոցին զթողթան եւ զկանոնս ժողովոյն Եփեսոսի, վեց սահմանեալ կանոնաւ, եւ զստույց օրինակս Գրոց: Զոր առեալ մեծին Սահակայ եւ Մեսրոպայ՝ դարձեալ թարգմանեցին զմի անգամ թարգմանեալն փութանակի, հանդերձ նոքօք վերստին յօրինեալ նորագմամբ: Բայց քանզի անգէտք էին մերումս արուեստի՝ ի բազում մասանց թերացեալ գործն գրանել, վասն որոյ առեալ մեծին Սահակայ եւ Մեսրոպայ զմեզ առաքեցին յԱղեքսանդրիայ, ի լեզու պանծալի, ի ստույգ յօդանալ ձեմարանին վերաբանութեան»¹⁰:

3 Մարթ., ԺԶ 13, հմմտ. նաեւ Մարթ., ԺԴ 6-11: Մարկ., Ը 27-29, Ղուկ., Թ 18-20:

4 Ագաթանգեղոս, Նայոց Պարմութեան, Ա. Տեր-Ղեւոնդյան, Եր. 1983, էջ 242:

5 Վերջիններից երկուսն ամենահին քարքերակներն են՝ Sinaitic - syr^c, Curetonian - syr^c, NT, p. 62:

6 Հմմտ. նույն գլխի եւ նույն պարբերութեան վերջին երկու նախադասութիւնները, Մարթ. ԺԶ, 17-18 եւ Մարթ. ԺԶ 18 (Յովհ. Ա. 42):

7 Մովսես Խորենացի, Նայոց պարմութեան, աշխարհաբար թարգմանութիւնը Ստ. Մայիսասյանի, Եր., 1981, էջ 440-442:

8 NT, p. 68.

9 Հմմտ. նաեւ Մարթ. Է 2, Խոր., 1981, էջ 341, Մարթ. ԻԳ 35, Խոր., 1981, էջ 304, Ղուկ. ԻԳ 31, Խոր., 1981, էջ 304, Յով. ԺԲ 20, Խոր., 1981, էջ 174, Երմ. Դ 12, Խոր., 1981, էջ 298:

10 Խոր., 1981, էջ 426, Խոր., 1991, էջ 343: Անտվոր եւ հերաքրքրական «վերաբանութիւն» բառի վերաբերյալ քնն Մ. Շիրիւյան, Անդիկ ավանդութեան փոխակերպումը վաղ բյուզանդական եկեղեցական պարմագրութեան եւ հայ եկեղեցականութեան մեջ, «Աշխատակ» Ա, Նայագիւրական պարբերագիրք, Եր. 1995, էջ 21, էջ 23-24, ծն. 31, ինչպէս նաեւ՝ Մ. Շիրիւյան, Քրիստոնեական վարդապետութեան անդիկ եւ հելլենիստական քարքերը, հայկական եւ հունական դասական եւ բյուզանդական, աղբյուրների բաղդարութեամբ, Եր., 2005, էջ 56-63, 129,

Նունարան դպրոցի թարգմանություններում Աստվածաշնչից կատարված մեջբերումների վերապատումների կամ անստույգ մեջբերումների օրինակները չափազանց շատ են այսպիսի քննարկելու համար. դրանք առանձին ուսումնասիրության առարկա են: Այնուամենայնիվ, ասվածը հիմնավորելու համար, կանգ առնենք որոշ օրինակների վրա:

Այսպես՝ «Գիրք պիտոյից»-ի 8-րդ գրքում բազում աստվածաշնչային մեջբերումներից գրեթե բոլորն Աստվածաշնչի այս կամ այն դրվագի վերաշարադրանքն են: Սոկրատ Սքոլաստիկոսի «Եկեղեցական պարմության» մեջ մեջբերումներն արդեն նկարելիորեն մտնում են կանոնիկ տրեքսին, սակայն դարձյալ բավականին ազատ վերապատումներ են: Ըստ որում, հեղինակի պատկերացումն է նշել, որ հունարեն բնագիրն էլ, աստվածաշնչային հատվածներն մեջբերելիս, միշտ էլ, որ ստույգ հեղինակ է կանոնիկ տրեքսին:

Բերենք մի քանի նման օրինակներ մեզ համար առավել ուսումնասիրված Սոկրատ Սքոլաստիկոսի «Եկեղեցական պարմություն»-ից և այդ գրվածքի երկու հայերեն տարբերակներից՝ հունարեն թարգմանությունից՝ Մեծ Սոկրատից ու վերջինիս խմբագրությունից՝ Փոքր Սոկրատից:

Նունարեն բնագրում կարդում ենք՝ «καὶ ἐνὶ χιτῶνι ἐκέχρητο, τὸ τοῦ εὐαγγελ... οὐ φολάττων ῥήτόν»¹¹, որը Մեծ Սոկրատում թարգմանված է. «և միայն պարմունճանի պիտառեալ լինել՝ զառաքելոյն պահելով գրան»¹²: Ի դեպ, այսպիսի «զառաքելոյն» բառը հունարեն բնագրի «εὐαγγελ...ου»-ի համարժեքը է, ինչը նշանակում է, որ հունարեն բնագրի այն տարբերակում, որից արված է այս թարգմանությունը դրա փոխարեն եղել է ὁποσὶν բառը¹³: Փոքր Սոկրատում այս հատվածը բացակայում է: Խնդրոք առարկա արահայությունը երկրորդում են Մարթեոսի ավերարանի հեղինակ բառերը. «և մի երկուս հանդերձ»¹⁴: Այսինքն՝ մեջբերումը տարբերվում է Մարթեոսի Ավերարանի կանոնիկ տրեքսից. Սոկրատի երկում «ոչ թե երկու հանդերձ» արահայությունը պարզեցված է փոխանցված է «միայն մեկ հանդերձ» ձևով: Նկատենք, որ վերջին բառի փոխարեն Մարթեոսի Ավերարանի հայերեն կանոնիկ տրեքստում օգտագործված է «պարմունճան»:

Անդրադառնանք մի քանի օրինակների ևս.

279, 292, 312:

11 G. Ch. Hansen, M. Širinjan, Socrates Kirchengeschichte, Akademie Verlag, Berlin, 1995, S. 236, 17 (այսուհետև, Hansen, Širinjan, 1995).

12 Մ. Տեր-Մովսեսյան, Սոկրատայ Սքոլաստիկոսի Եկեղեցական Պարմություն և Պարմություն վարդապետ Սիդրեատրոսի եպիսկոպոսի Նովմայ, Վաղարշապատ, 1897, էջ 308, 3-4 (այսուհետև Սոկրատ):

13 Նման. Hansen, Širinjan, 1995, S. 236, 17.

14 Մարթ. Ժ 10, հմմտ. հունարենը՝ μηδὲ δὴ χιτῶνας:

Թ-իւր ԺԲ 3	Մեծ Սոկրատ 676,8-12
Եւ այրն Մովսէս հեզ էր յոյժ քան զամենայն մարդիկ՝ որ էին ի վերայ երկրի:	...զոր արինակ գիր <i>Թ-ning</i> ն Մովսիսի ասէ. «Թ-էն այրն Մովսէս հեզ՝ յոյժ քան զամենայն մարդիկ որ ի վերայ երկրի», զայս է եւ այժմ ասել. «Թ-էն թագաւորն Թ-եղոսիոս այր հեզ յոյժ քան զամենայն մարդիկ որ են ի վերայ երկրի»
Numeri 12:3	Socr. 390,27-391,1
καὶ ὁ ἄνθρωπος Μωυσῆς πρῶτος σφόδρα παρὰ πάντας τοὺς ἀνθρώπους τοὺς ὄντας ἐπὶ τῆς γῆς.	καθάπερ ἡ β...βλος τῶν Ἀριθμῶν ἐπὶ Μωϋσέως φησὶ, 'Καὶ ὁ ἄνθρωπος Μωϋσῆς πρῶτος σφόδρα παρὰ πάντας τοὺς ἀνθρώπους τοὺς ὄντας ἐπὶ τῆς γῆς,' τουτέστι καὶ νῦν εἰπεῖν, ὅτι ὁ βασιλεὺς Θεοδόσιος πρῶτος σφόδρα παρὰ πάντας τοὺς ἀνθρώπους τοὺς ὄντας ἐπὶ τῆς γῆς.

Այսինքն՝ այսպեղ արդեն հունարեն տերսպը համահունչ է կանոնական բնագրին, ինչը չի կարելի ասել հայերեն թարգմանության մասին, որը տվյալ դեպքում ոչ միայն չի համապատասխանում այս հատվածի կանոնական թարգմանությանը (մասնավորապես իջեցված են օժանդակ բայերը), այլև զարմանալիորեն չի հեղուկում հունարեն բնագրին: Փոքր Սոկրատում այս հատվածը բացակայում է:

Մեկ այլ տեղ կարդում ենք.

Մարթեոս ԺԷ 2	Մեծ Սոկրատ 561,12
...եւ այրակերպեցաւ առաջի նոցա, եւ յուսաորեցան երեսք նորա իբրեւ զարեգակն, եւ հանդերձք նորա եղին սպիտակ իբրեւ զոյս: Եւ ահա երեւեցան նոցա Մովսէս եւ Եղիա՝ որ խոսէին ընդ նմա:	...բայց զիս եւ Սողոմոն յորդորեաց ասելով, եղիցին հանդերձք քո միշտ սպիտակք, եւ Փրկիչն յաւերարանսն սպիտակ հանդերձիք երեւի հպեալ, եւ ոչ այս միայն, այլ եւ զՄովսէս եւ զԵղիայ սպիտակ հանդերձիք եցոյց առաքելոցն:
Matt. (cf. Mk. 9:2; Lk. 9:29)	Socr. 345,28ff.
καὶ μετεμορφώθη ἔμπροσθεν αὐτῶν, καὶ ἔλαμψεν τὸ πρόσωπον αὐτοῦ ὥς ὁ ἥλιος, τὰ δὲ ἱμάτια αὐτοῦ ἐγένετο λευκὰ ὥς τὸ φῶς, καὶ ἰδοὺ ὤφθη αὐτοῖς Μωϋσῆς καὶ Ἦλ...ας συλλαλοῦντες μετ' αὐτοῦ.	ἐμοὶ δὲ καὶ ὁ Σολομὼν παρήνεσε λέγων, “Ἔστωσάν σοι ἱμάτια <ἀεὶ> λευκά.” καὶ ὁ Σωτὴρ ἐν τοῖς εὐαγγέλ...οις λευκῇ φα...νεται ἐσθῆτι χρησάμενος· οὐ μὴν ἀλλὰ καὶ Μωϋσῆν καὶ Ἦλ...αν λευκοφοροῦντας τοῖς ἀποστόλοις ἔδειξεν.

Նախ պարզաբանենք փակագծերում դրված <ἀεὶ> բառը. այն Սոկրատ Սքոլաստիկոսի

«Եկեղեցական պարմության» բնական բնագրում վերականգնել ենք հայերեն թարգմանության համաձայն, քանի որ այս բառի համարժեքը («միշտ») վկայված է ոչ միայն հայկական թարգմանության մեջ, այլև Սոգոմենի երկում՝ հենց այն հապավածում, որի աղբյուրն է Սոկրատի պարմությունը: Նարկ է նշել, որ խնդրո առարկա հապավածը կա (այսինքն չի կրճատված) նաև Փոքր Սոկրատում:

Զի Սոգոմեն յորդորէ, ասէ եղիցին հանդերձք քո սպիրակք. եւ Տէրն սպիրակ հանդերձի երեւի ըստ Աւերարանին. եւ ոչ այս միայն, այլ եւ գՄովսէս եւ զԵղիա սպիրակ հանդերձի եցոյց առաքելոցն¹⁵:

Այս օրինակը, թերևս ամենահեղինակալիկն է. «Եկեղեցական պարմության» թե՛ հունարեն բնագիրը, թե՛ հայերեն տարբերակները հաղորդում են մի փոփոխություն, այն է՝ Մովսէսի եւ Եղիայի սպիրակ հանդերձ կրկնում վերաբերյալ պարմումը, որը բացակայում է ոչ միայն այս դրվագին համապատասխանող Մարթեոսի Ավերարանի ԺԷ գլխում, այլև վկայված չէ Աստվածաշնչի գրքերից եւ ոչ մեկում. փաստը նշված է Մեծ եւ Փոքր Սոկրատների հրապարակիչ Մ. Տեր-Մովսէսյանի կողմից. «ոչ մի փոփոխ կա յիշուած, որ Մովսէսը եւ Եղիան սպիրակ հանդերձ ունեին»¹⁶: Սակայն ուշագրավ է, որ նույն այս վկայությունն առկա է նաև «Սուդա» բառարանում.

ὥς δὲ τὸν ἱερωμένον μέλαιναν ἀμφιέννυσθαι· ἐμοὶ δὲ καὶ ὁ Σολομὼν παρήνεσε, λέγων· ἔστωσάν σοι ἱμάτια λευκά. καὶ ὁ Σωτὴρ ἐν τοῖς Εὐαγγέλ...οις φα...νεται λευκῇ ἐσθῆτι χρησάμενος. οὐ μὴν ἀλλὰ Μωσὴν καὶ Ἡλ...αν λευκοφοροῦντας τοῖς ἀποστόλοις ἔδειξε. ταῦτα καὶ ἄλλα πολλὰ εἰπὼν ἐθαυμάσθη.¹⁷

Բոլոր ավերարաններում էլ, որպես խոսվում է «սպիրակ հանդերձ»-ի մասին (հմմտ. Մարկոս Թ 2, Ղուկաս Թ 29), դրանից հետո արժարժված են Մովսէսի եւ Եղիայի անունները: Ինչ է սա. Սոկրատ Սքոլաստիկոսի կողմից ցուցաբերված կամայականություն, թե՛ պարզ է ենթադրել, որ Սոկրատն օգտվել է ինչ-որ խմբագրությունից, որպես այս հապավածն առկա է եղել: Կարծում ենք, որ Սոկրատ Սքոլաստիկոսի «Եկեղեցական պարմության» բնագրում եւ դրա հայկական տարբերակներում, ինչպես նաև «Սուդա» բառարանում արձանագրված այս հապավածը միանշանակ փաստում է, որ այն գոյություն է ունեցել Աստվածաշնչի միջնադարյան որոշ խմբագրություններում: Ինչեւէ, այս սուրբգրային փոփոխ կարող է բացատրության:

Մեծ Սոկրատում կան նաև օրինակներ, երբ աստվածաշնչային վկայակոչումը մեջբերված է չափազանց ազատ վերաշարադրանքով.

15 Սոկրատ (Մեծ Սոկրատ) 561,26-29:

16 Սոկրատ, 561,23-24.

17 Lexicon, ed. A. Adler, Suidae lexicon, 4 vols. [Lexicographi Graeci 1.1-1.4. Leipzig: Teubner, 1.1:1928. 1.2:1931. 1.3:1933; 1.4:1935, repr. Stuttgart: 1.1:1971; 1.2:1967; 1.3:1967; 1.4:1971]: 1.1:1-549; 1.2:1-740. 1.3:1-632. 1.4:1-854, Alphabetic letter sigma entry 481, 16-17.

Ղուկաս Բ 10-12	Մեծ Սոկրատ 470-471,4
Եւ ասէ զնոսա, ահա՛ իբրեւ մարանիցէք ի քաղաքն, պարահեցէ՛ ձեզ այր մի բարձեալ սափոր ջրոյ. երթիջիք զհետ նորա ի քունն յոր մարանիցէ. եւ ասասջիք զքանուրէր քանն. վարդապետ ասէ քեզ. «Ու՛ր եւն վանքն իմ, յորում զպատերն ուրիցեմ աշակերտօքս հանդերձ: Եւ նա ցուցէ ձեզ վերնարանն:	Ի նախ մտնալ ուսուցանէր. ի վերնարանն նմա Զարիկն պարրասարել հրամայէր, էջ կապեալ լուծանել հրամայէր. զբարձաւն զսափոր ջրոյն նշան քայր փութաւագն ի Զարիկն. եւ այդս բերս որքան յԱնկարարնս գրին:
Lukas 22:10-12	Socr. 304,18 ff.
εἶπεν αὐτοῖς, Ἴδοὺ εἰσελθόντων ὑμῶν εἰς τὴν πόλιν συναντήσεται ὑμῖν ἄνθρωπος κεράμιον ὕδατος βαστάζων· ἀκολουθήσατε αὐτῷ εἰς τὴν οἶκ...αν εἰς ἣν εἰσπορεύεται. καὶ ἔρεῖτε τῷ οἰκοδεσπότῃ τῆς οἰκ...ας, Λέγει σοι ὁ διδάσκαλος, Ποῦ ἔστιν τὸ κατάλυμα ὅπου τὸ πιάσχα μετὰ τῶν μαθητῶν μου φάγω; κἀκεῖνος ὑμῖν δε...ξει ἀνάγκαιον μέγα ἐστρωμένον·	Ἐν πλο...φ εἰσελθὼν ἐδ...δασκεν· εἰς ἄνῳγον οἶκημα τὸ Πιάσχα εὐτρεπισθῆναι ἐκέλευσεν· ὄνον δεδεμένην λυθῆναι προσέταττεν· τὸν βαστάζοντα κεράμιον ὕδατος, σημείον ἐδ...δου τοῖς εἰς τὸ Πιάσχα σπουδάζουσι· καὶ ἄλλα ὅσα μυρ...α ἐν Εὐαγγελ...οις γέγραπται.

Այս դեպքում, սակայն, «ազատությունը» սերում է բնագրից. այսինքն հենց Սոկրատ Սրբապրիկոսն է, որ վերապարմում է նշված «տեղի»-ն եւ ոչ թե սրույզ մեջբերում անում: Այդպիսի օրինակները բնութագրվող գրվածքում բավական շատ են, օրինակ.

Բ Կորնթ ԺԳ 6	Մեծ Սոկրատ 520,5
...թեպէր եւ տրգէր եւս իցեմ բանիւ, այլ ոչ եթէ զհպրութեամբ.	...այդ յափշտակէր զբազումս ի միայնացեալոցն արս ողջախոսի եւ տրգէրս բանիւ ¹⁸ , իսկ զյոյժիւ եւ ասանց դպրութեան:
II Cornt. II:6	Socr. 324,5f.
...εἰ δὲ καὶ ἰδιώτης τῷ λόγῳ, ἀλλ' οὐ τῇ γνώσει, ἀλλ' ἐν παντὶ φανερώσαντες ἐν παύσιν εἰς ὑμῶς.	...ἰδιώτας δὲ τῷ λόγῳ ¹⁹ , τοὺς πολλοὺς δὲ ἀγραμμάτους ὄντας.

Ըստ որում, «*Եկեղեցական պատմություն*» մեջ եւ ինքնուրույն լուծակներով (Socr. 384,15 - 'իծնոյտի տօ լոյգօ') բառացի է փոխանցում սուրբգրային այս տեղին եւ Մեծ Սոկրատը հետեւում է դրան (Մեծ Սոկրատ, 664,13՝ «տրգէր բանիւ», Փոքր Սոկրատ, 664,28՝ «տրգէր էր բանիւ»):

18 Սոկրատ (Մեծ Սոկրատ) 664,13-14՝ «տրգէր բանիւ»:

19 Hansen, Širinjan, 1995, S. 384,15 «ἰδιώτης τῷ λόγῳ»:

Զարմանալի է նաև այն փաստը, որ այսպես կոչված Փոքր Սոկրատը եւս ոչ միշտ է հեղինակում Աստվածաշնչի կանոնիկ տեքստին: Թեև Մեծ Սոկրատի համեմատությամբ աստվածաշնչային վկայություններն այդպեղ փոփոխված են, սակայն կարելի է ասել, որ դրանք նույնպես ավելի նման են վերաշարադրանքի, քան սպույզ մեջբերումների, եւ, հաճախ, ներկայացված են հեղինակի բառերով: Օրինակ, Փոքր Սոկրատը կարդում ենք. «Ներովդիադայ մոլի եւ խնդրէ զգլուխն Յոհաննու»²⁰: Մեծ Սոկրատ ունի. «Ներովդիաս մոլի, դարձեալ կաքաւէ, դարձեալ զգլուխն Յոհաննու ի վերայ սկսեղբն փոթայ առնուլ»²¹, որն ավելի մոտ է աստվածաշնչային տեքստին²²:

Աստվածաշնչից կարարված մեջբերումների խնդիրը հեղափոխական է ոչ միայն հունաբան, այլեւ, քնդհանրապես, վաղ շրջանի թարգմանությունների առումով:

Այսպիսով նյութի բաղդատումը վկայում է, որ վաղ շրջանի հեղինակները, եւ հատկապես Հունաբան դպրոցի ներկայացուցիչները, երբեմն նույնիսկ դիմում էին Աստվածաշնչի վկայությունների խմբագրմանը կամ ինքնուրույն թարգմանությանը: Ավելի սպույզ՝ վերջիններս հեղինակում էին հունաբան բնագրին եւ բառացիորեն թարգմանում այն, հաճախ անսխալ Աստվածաշնչի արդեն գոյություն ունեցող թարգմանությունը: Թեթևադա կարելի է բացատրել այն փաստով, որ համաձայն որի Է-Ը դդ. Նոր Կտակարանի կանոնական թարգմանությունները դեռևս վերջնականապես չէին ձևավորվել՝ մասնավորապես Արևելքում:

Միևնույն ժամանակ թե՛ հայ պարմիչների երկերում, թե՛ հունաբան թարգմանություններում Նոր Կտակարանից ազատ թարգմանված կամ խմբագրության հեղքեր կրող մեջբերված հարվածները հաստատում են, որ դրանք առնվազն սպեղծվել են մինչև Է-Ը դդ. եւ կարող են ուսումնասիրողներին փրամադրել նախնական թարգմանության նոր փոխարինը:

Մեկ անգամ եւս նշենք, որ, անշուշտ, քննարկվող խնդրի լուծմանը մեծապես կնպաստի ավելի վաղ շրջանից մեզ հասած պարամիկ պահպանակների հրապարակումը եւ Աստվածաշնչի հայերեն քննական բնագրի կազմումը, ուստի եւ այս խնդիրը փակավին քննելի է:

20 Սոկրատ (Փոքր Սոկրատ) 553, 1-2:

21 Սոկրատ, էջ 552, 15-17:

22 Նման, Մարկ. Ձ 19-28, Մարթ. ԺԴ 6-11: